Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտի պատասխանատվությունը բնապահպանության և հանրային առողջության հարցերում

Քաղաքականության ամփոփագիր

Խնդրի դրվածքը

Հայաստանում հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարություն մշակելու համար նախ անհրաժեշտ է արմատական լուծումներ գտնել տասնամյակներ շարունակ լճացած բնապահպանական և առողջապահական խնդիրներին: Ընդ որում, չպետք է խուսափել բոլոր հիմնական խնդիրների հետ առերեսվելուց, քանի որ առանց դրանց լուծման ուղղակի անհնար է Հայաստանում սկսել իմաստալից հանրային երկխոսություն ներկայում անպատասխանատու կերպով կառավարվող այս ոլորտի վերաբերյալ: Ինստիտուցիոնալ կարողությունների, այդ թվում՝ պրոֆեսիոնալ մասնագետների և տեխնիկական հագեցվածության խնդիրները, օգուտների և վնասների հիմնավորված գնահատականի բացակայությունը, հանրային առողջության հարցերի չկարգավորվածությունը ոլորտի հետագա զարգացման հեռանկարը դարձնում են արհեստական, փաստացի մասնագիտական հենքից ու քաղաքական նպատակահարմարությունից կտրված մի գործընթաց:

Հիմնական օրենսդրական և ինստիտուցիոնալ խնդիրները և բացերը

Առաջնահերթ լուծում պահանջող բնապահպանական և առողջապահական հիմնախնդիրները կարելի է պայմանականորեն բաժանել երեք հիմնական խմբերի՝

ա) ՇՄԱԳ գործընթացի որակի բարձրացում և այլ ոլորտների պատասխանատուների ներգրավում փորձաքննությունների և թույլտվությունների տրամադրման գործընթացում,
բ) հանքարդյունաբերական ծրագրերի օգուտների և վնասների լիարժեք վերլուծություն,
գ) հանրային առողջության վրա հանքարդյունաբերության ազդեցության գնահատում և փորձաքննություն:

Ընդերքօգտագործման թույլտվությունների տրամադրման ընթացքում որպես պատասխանատու պետական մարմիններ ներգրավված չեն բոլոր առնչակից պետական մարմինները, որոնց մասնագիտական գործունեության տիրույթում է գտնվում տվյալ նախագծի ազդեցության գնահատումը (բնապահպանականից բացի՝ նաև առողջապահական, տնտեսական, տարածքային զարգացման, մշակութային ժառանգության պահպանման և այլն):

Չի իրականացվում հանքարդյունաբերական ծրագրի լիարժեք *օգուտ-վնաս* հարաբերակցության ստուգում, որով հնարավոր կլինի գնահատել նախագծի ընդհանուր սոցիալ-տնտեսական ազդեցությունը: Դրա համար չկա օրենսդրական պահանջ, ինչպես նաև ենթաօրենսդրական կարգեր և մեթոդաբանական ուղեցույցներ:

Ներկայումս ընդերքօգտագործման թույլտվություններ տրամադրելիս չի իրականացվում հանքարդյունաբերական ծրագրի՝ մարդու առողջության վրա ազդեցության, ինչպես նաև տարածքային կառավարման, տնտեսության այլ ոլորտների զարգացման հետ համատեղելիության գնահատում և փորձաքննություն:

Քաղաքականության մշակման նախնական առաջարկներ

- Թույլտվությունների տրամադրման գործընթացը համապարփակ և հիմնավորված դարձնելու համար փորձագիտական մակարդակով պետք է ներգրավել առնվազն առողջապահության, տնտեսական զարգացման և մշակութային ժառանգության պահպանման հարցերի համար պատասխանատու մարմիններին:

- Ի թիվս շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ազդեցության գնահատման և փորձաքննության՝ թույլտվություն տրամադրելիս պետք է գնահատվի նաև կոնկրետ հանքարդյունաբերական ծրագրի համատեղելիությունը տվյալ վայրում իրականացվող տնտեսվարման գործունեության այլ տեսակների հետ, ինչպես նաև ծրագրի ազդեցությունը մշակութային ժառանգության պահպանման տեսանկյունից:

- Ընդերքօգտագործման ծրագրի տված սոցիալ-տնտեսական օգուտների և վնասների հարաբերակցությունը պետք է գնահատվի ոչ թե ընկերության մասնավոր առևտրային շահի, այլ բազմակողմանիորեն գնահատված հանրային բարիքի տեսանկյունից:

- Միջազգային փորձի ուսումնասիրմամբ պետք է մշակել ընդերքօգտագործման հետևանքով մարդու առողջության վրա ազդեցության գնահատման և փորձաքննության նորմատիվային մեխանիզմ, ինչպես նաև սահմանել վնասի փոխհատուցման օրենսդրական հնարավորություն:

Միջազգային լավագույն փորձը

Ընդերքօգտագործման թույլտվությունների տրամադրման հարցում որպես միջազգային դրական փորձ կարելի է դիտարկել Շվեդիայի օրինակը: Այդ երկրում հանքավայրի շահագործման թույլտվության տրամադրումն իրականացվում է մասնագիտացված դատարանի կողմից՝ բոլոր շահագրգիռ կողմերին դատական վարույթի ընթացքում լսելուց և փաստերը բազմակողմանիորեն գնահատելուց հետո միայն:

Ոլորտի օգուտ-վնաս հարաբերակցությունը գնահատելու լավագույն օրինակ կարող է ծառայել Եվրամիության տարածքում խոշոր ներդրումային ծրագրերի օգտակարությունը գնահատող ուղեցույցը: Այն մշակված է ոչ միայն հանքարդյունաբերական, այլև առհասարակ բոլոր խոշոր նախագծերի կենսունակությունը գնահատելու համար և հիմնվում է հանրության բարեկեցության բարձրացման նախապայմանի, ոչ թե զուտ նախագծային շահութաբերության չափանիշի վրա՝ ֆինանսական ծախս-օգուտ մեթոդաբանությամբ: